

Տ. ՆՈՐԱՅՐ ԱԲԵՂԱ ՄԻՄՈՆՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(21 նոյեմբերի 2004 թ.)

*«Շնորհեա ինձ քահանայական փառք մը-
տանեկ ի պաշտօն սրբութեանց Բոց ընդ աշու-
սիկ, որք անմեղութեամբ պահեցին զպար-
փրակս Բո»:*

(Պարարագանարոյց)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավաքացալ բոյրեր և եղբայրներ, շուրջ քառասուն օրեր առաջ ես և իմ տաս-
նութ օժակից եղբայրները ծունկի եկանք և ուխտեցինք ցկյանս լինել սպասավոր Հայաս-
տանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և ապա ձեռնադրվեցինք և օծվեցինք քահանա,
որին հաջորդեց մեր հայրերի կողմից հաստատված քառասուրյա պահեցողության շրջա-
նը: Ինչպես Սավուղը, Դավիթն ու Մողոմոնը քառասուն տարիներ թագավորեցին, այնպես
և մենք այս քառասուն օրերի ընթացքում թագավորում էինք մեր անձերի և հոգիների վրա:
Եվ ի լուրմն այդ քառասուն օրերի՝ իմ անդրանիկ Պարարագն եմ մատուցում ահա այսօր
այս պահին: Գոհություն և փառք եմ մատուցում առ Աստված և ասում. «Փառք Զեզ, Աստ-
ւած, փառք Զեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք Զեզ»:

Փառք Զեզ, որ ինձ՝ անարժանիս ընտրեցիր Զեզ սպասավոր և դարձրիր խոսքիդ դես-
պանն ու տարածողը, ինչպես նաև աղոթում եմ, որպեսզի Աստված ինձ շնորհի սրբություն,
որպեսզի պաշտեմ Իրեն նրանց հետ, ովքեր սրբությամբ են պահել Իր պարավիրանները:
Լինել քահանա, առաջին՝ նշանակում է լինել ծառա և սպասավոր, բայց և մեծագույն պա-
րիվ է միևնույն ժամանակ, քանզի քահանան է, որ սպասավորում է Աստվծուն, ապաշխա-
րության կոչում ժողովրդին, մկրտություն անում և Սուրբ Հաղորդության միջոցով թողույթ-
յուն տալիս ժողովրդի մեղքերին:

Սիրելիներ, այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբում է Ս.
Աստվածածնի երից ամաց տաճար ընծայման տոնը: Համաձայն սրբազան ավանդության,
սուրբ կույս Աստվածածնի ծնողները՝ Հովակիմն ու Աննան, չունեին զավակներ և ամեն օր
աղոթելով՝ Աստծուց խնդրում էին մի զավակ և իրենց սրբում ուխտ էին արել, որ եթե Աստ-
ված իրենց մի զավակ պարգևի, ապա այդ իրենց զավակին կնվիրեն տաճարին, կընծայեն
տաճարին ի սպասավորություն: Եվ երբ լրացավ Սուրբ Աստվածածնի երեք տարին, նրա
ծնողները, համաձայն իրենց ուխտի և երդման, հանձնեցին Սուրբ Աստվածածնին տաճար
ի սպասավորություն:

Համաձայն սրբազան ավանդության, շուրջ տասներկու տարիներ Սուրբ Աստվածածնի-
նը մնաց և սպասավորեց տաճարում: Չպետք է մոռանալ, որ Ամենասրբուհի Կույսը մարդ-

կային ծնունդ է, բայց անաղարտության համար Ասործու կողմից ընտրվելով՝ դարձել է ասորվածային, սուրբ և ընտիրյալ։ Սա ամենամեծ պարզևն է, որին կարող է արժանանալ մարդկային էակը, լինել անսկիզբ Բանի մայրը, բայց Ասորվածածնի փառքը Զրիսպոսին հղանալը չէ միայն. նա մեծացրել է Նրան, խորապես քառապել Որդու բացակայության եղանակը չէ միայն. նա մեծացրել է Նրան, խորապես քառապել Որդու բացակայության տա-
օրերին, երբ Նա Իրեն կարարելապես նվիրել էր քրիստոնեական վարդապետության քա-
ռածմանը և հաստատումները։ Հեթանոսական մի փաստ է. մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս
Քրիստոսի առաջին և վերջին օրերն աղերսվում են Սուրբ Ասորվածածնի հետ։ Երբ մեր
Քրիստոսի առաջին և վերջին օրերն աղերսվում են Սուրբ Ասորվածածնի հետ։ Երբ մեր
Տերն առաջին անգամ բացեց Իր աչքերը Բեթղեհեմի մութում, Նա քննավոր Սուրբ Ասորվ-
ածածնին, և խաչելության ժամանակ Գողգոթայի վրա Տիրոջ երկրային կյանքն ավարտվեց
ծածնին, և խաչելության ժամանակ Գողգոթայի վրա Տիրոջ երկրային կյանքն ավարտվեց
Սուրբ Ասորվածածնին նայելով։ Ասվածը եթե հարաբերենք մեր այսօրվա կյանքի հետ,
ասկա Եկեղեցին մեր մայրն է, և մենք՝ պարզ հավատագրյալներս ծնվում ենք Եկեղեցուց
սուրբ մկրտության ժամանակ և քննություն մեր Եկեղեցու սուրբ ավագանը, և երբ հեռանում
ենք այս աշխարհից և հրաժեշտ ենք քալիս, որպեսզի միանանք հավիտենական Ասործուն,
դարձյալ Եկեղեցու միջոցով է, որ բաժանվում ենք։ Այս քոնը մեզ սովորեցնում է ծառայա-
սիրություն, ծառայասիրություն և ավելի խոնարհ լինելու խորհուրդը։ Խոնարհություն և ծա-
ռայասիրություն նշանակում են սեր և աղոթք։

Միրելի հավաքացյալներ, խնդրում եմ մի պահ բոլորդ բարձրացրեք ձեր աչքերը և նայե՛ք այս որմներին. ի՛նչ է, կարծում եք սրանք լոկ քարեղեն իրողությունո՞ւն են. ո՛չ, երբեք: Սրանք մեր նախնիների աղոթքն են, որոնք քարեղեն են դարձել, որպեսզի պահեն ու պահպանեն մեզ, որպեսզի մշտապես բարեխոսները լինեն մեզ համար, և այսօր մենք ամենքս կարիքն ունենք նաև այդ աղոթքի, որպեսզի մենք ինքներս ևս աղոթենք: Խնդրում եմ, մի պահ աղոթենք բոլոր մեր այն եղբայրների ու քույրերի համար, որոնք այսօր մոլորված են, որոնք շեղվել են իրենց Մորից՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուց իր էջմիածին կենտրոնով և այսօր դարձել են ինչ-ինչ պապոճառներով աղանդավորներ: Նրանք մոլորված են: Խնդրում եմ աղոթենք բոլոր նրանց համար, որպեսզի շնորհաբաշխ Սուրբ Հոգին շնորհագարդի. նրանց և քա իմաստություն, որպեսզի հասկանան, թե իրենք մոլորված են և վերադառնան առ Մայր Եկեղեցին:

Միևնի հավաքացյալներ, հայցում եմ, որպեսզի բոլորդ աղոթեք նաև ինձ համար, քանզի, ինչպես ասացի, սա իմ անդրանիկ Պարարազն է, և խնդրեք, որպեսզի ինձ՝ նվաստիս, ում այսօր շնորհվել է այս քահանայական պաշտոնը, Աստված ուժ- և կարողություն փառ, որպեսզի միշտ և հավերժ լինեմ Նրա սպասավորը և ոչ մի գայթակղություն չշեղի ինձ իրենից:

Ավարտելով խոսքս՝ չեմ կարող երախտագիտության խոսք չուղղել Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որովհետև դեռ մեր ուսանողական փառիներից Վեհափառ Հայրապետը մեզ ուղղորդում էր դեպի այս օրը, և այսօր ցանկանում եմ իմ որդիական խոնարհությունն ու սերը հայտնել Նորին Սրբությանը՝ ասելով, որ այսօր Պատարագի ընթացքում պատարագում եմ նաև սերս ու նվիրումս և երգվում, որ ցկյանս հավաքարհմ կմնամ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ասաված թող երկար և բարեբեր հայրապետական փառիներ շնորհի Նորին Սրբությանը: Նաև ցանկանում եմ երախտագիտության խոսք ուղղել Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանին՝ իմ հոգևոր ծնողին, քանզի

Սրբազան Հոր աջով է, որ օծվեցի և դարձա քահանա: Թող Աստված երկար և ծաղկյալ գավազան շնորհի Սրբազան Հորը:

Որդիական անկեղծ սիրով խոսք եմ ուղղում նաև առ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչությունն ու դասախոսական կազմը, քանզի վեց տարիներ ուսանելով այնտեղ, տեսել եմ, թե ինչպես տեսչական և դասախոսական կազմը միշտ անձանձիր կերպով ուսուցանել են մեզ, որպեսզի մի օր ավարտելով դառնանք հոգևոր սպասավորներ: Շնորհակալական խոսք եմ ուղղում նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետությանը՝ հանձին Հոգեշնորհ Ս. Արտակ վարդապետ Տիգրանյանի, քանզի այս քառասուն օրերի ընթացքում Հոգեշնորհ Հայր Սուրբը մեզ սովորեցնում էր, թե ինչպես կատարենք արարողությունները, ինչպես նաև մասնավոր շնորհակալության խոսք Հոգեշնորհ Ս. Արշեն արեղա Մանուսյանին և Հոգեշնորհ Հայրեր Ս. Մուշեղ և Ս. Վարդան արեղաներին, քանզի իրենք ևս այս քառասուն օրերի ընթացքում անձանձիր կերպով մեզ հետ էին և մեզ սովորեցնում էին թե՛ Եկեղեցու ծեսը, թե՛ սպասավորությունը և այն ամենը, ինչը կապված է Եկեղեցու հետ:

Նաև շնորհակալությունս իմ ծնողներին և ընկերներին, քանզի նրանց շնորհիվ է և նրանց խորհուրդներով, որ ես եկա և ընդունվեցի Ճեմարան և ընդունեցի կուսակրոն քահանայության ուխտս: Շնորհակալություն նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ողջ միաբանությանը, ի մասնավորի ավագ միաբանությանը, քանի որ ավագ միաբանությանը տեսնելով, միաբանության ավագ անդամներին տեսնելով՝ սովորում ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հնամենի ավանդությունները և ընձյուղվում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անդաստանից ներս:

Շնորհակալություն նաև ձեզանից, սիրելի հավաքացյալներ, որ քառասուն օրեր առաջ Սուրբ Պարարագի ընթացքում, երբ օծվում էինք, վկայեցիք, թե արժանի են: Վստահ եղեք, որ միշտ կարդարացնեմ ձեր բոլորի հույսերը, և թող Աստված վերստին ուժ և կարողություն շնորհի մեզ ամենքիս, և թող երկիրը Հայոց միշտ լինի խաղաղ ու երջանիկ:

Աղոթենք արդ, որ Աստված շնորհի խաղաղություն Հայաստան աշխարհին և ժողովրդին հայոց ի Հայաստան և ի Սփյուռք աշխարհի, և Սուրբ Հոգին լինի մեզ բոլորիս հետ այժմ և միշտ և հավիտյան հավիտենից. ամեն: